ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՓԵՍԱՑԻ (ԵՊՍ.)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Շար. տես Բազմավէպ, 1934, էջ 266)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻԲ.

Յաղագս Որմզդի որդւոյ Խոսրովու արքայի, որ բազաւորեաց փոխանակ Նորա։

Իբրեւ մեռաւ արքայ Խոսրով, թագաւորեաց փոխանակ Նորա՝ մի յորդւոց Նորա, անուն Որմիզդ, որ՝ որպէս ցուցցեն պատերազմունք և գործք Նորա զոր պատմեցոս եմք, էր երիտասարդ ամբարտաւան և գոռոզ և պակասամիտ։ Արդ իբրեւ եդաւ զթագ, ընդ հպարտութեան և անմտութեան ամբարհաւաճ բարուցն, ոչ կամեցաւ ըստ օրինի թագաւորաց առաքել առ կայսրն հոռոմոց զթագնշանակն (symbolum), մինչդեռ Տիբերիոս կայսր՝ թէպէտ և մարտ պատերազմի էր երկոցուն ընդ միմեանս, ոչ զլացաւ ըստ օրինի հրահանգաց առաքել առ արքայ Խոսրով՝ ի սկիզբն թագաւորութեան իւրում զընծայս թագնշանակին. Նոյնպէս և Խոսրով արքայ առաքեաց ի թագաւորելն իւրում առ կայսրն Յուստինիանոս որ երեք ամօք յառաջ քան զնա թագաւորեալ էր։ Իսկ սա ասէր յամբարտաւանութեան և յանմտութեան իւրում. Մի՞թէ ծառայից իմոց ընծա՞յս առաքիցեմ. և ոչ առաքեաց։ Եւ ոչ այսչափ միայն, այլ անարգեաց ևս զդեսպանս Հոռոմոց, որք առ հայր Նորա եկեալ էին կայսերական պարգեւօք և հրովարտակօք։ Քանզի իբրեւ հասին Նոքա յԱնտիոք՝ լուան զմահն Խոսրովու և զթագաւորել որդւոյ Նորա։ Իբրեւ եհաս լուրս այս առ խաղաղասէր կայսերս մեր, պատուէր առաքեցին հրեշտակացն՝ երթալ յանդիման լինել Նորոյ թագաւորին։ Հրաման ետ նա հպարտութեամբ՝ գալոյ, ընկալաւ գոռոզաբար, և այնքան վիշտս վտանգաց հասոյց Նոցա ընդ երկար, մինչեւ ի բանտ արկանել և մահու սպառնալիս կրել։ Ապա խրատ ետուն նմա մոգքն արձակել զնոսա. այլ և յայնժամ ոչ ընդ ուղղոյ ճանապարհն արձակեաց զնոսա, այլ ետ զնոսա առն միոյ տանել ընդ ափփայս և ընդ լերինս բարձունս, մինչեւ յոգիս ապաստան լինել Նոցա և ասել ցառաջնորդս իւրեանց. Եթէ սպանանել զմեզ կամէիք՝ ընդէ՞ր ոչ ի սկզբանն յայտնապէս սպանէք, այլ ածէք զմեզ այսր չարամահ լինել ի վերայ լերանցս։ Բայց Տէր օգնեաց Նոցա, և ապրեցան ի մահուանէ և եկեալ պատմեցին կայսեր և ամենայն ժողովրդեան զչարութիւն և զանմտութիւն առնն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻԳ.

Թէ զի՞նչ պատճառք եղեն ծագման չարեացն և քակելոյ հաշտութեանն որ ընդ երկոսին տերութիւնսն։

Առաջին պատճառք հաշտութեան լուծման՝ Պարսկահայոց ի Հռովմայեցիս անձնատուր լինելն եղեւ։ Երկրորդ պատճառք ոխերիմ թշնամութեան եղեն առաքումն դեսպանի ի կայսերէն Հռովմայ ընդ խորին աշխարհն Պարսից առ ազգս որք թուրք անուանէին. Թող զայլ պատճառսն, վասն որոյ Պարսք մխեցան ի գործս դառնութեան և յանհաշտ պատերազմն։ Քանզի կայսրն Յուստինոս յամի եօթներորդի թագաւորութեան իւրում առաքեաց հրեշտակ առ թուրքս զայր մի պատուական Ծեմարք անուն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻԷ.

Յաղագս Մօրկայ կարգելոյ սպարապետ ամենայն զօրաց յարևելս։

Եւ լինէր յետ մահուան Կոստանդիանոսի Պատրկի որդւոյ Գերմանոսի, որ էր ընդհանուր զօրապետ ամենայն զօրաց արեւելից, ոչ կամէին զօրավարք զօրաց գիջանել իրերաց. վասն որոյ բարեպաշտ կայսրն Տիբերիոս զՄաւրիկ, զորմէ ի վեր անդր պատմեցաւ, որ եղեալ էր Նորա քարտուղար, և պատուեալ ի նմանէ ի սկզբան թագաւորութեան իւրում և արեւեալ նմա զպատիւ Պահապետութեան[1], և ապա առաքեալ զնա իբրեւ սպարապետ ընդհանուր և հրամատար զօրաց Հոռոմոց, որ էին յամենայն կողմանս արեւելից. և կարգէր զնա՝ տեսուչ պատերազմաց, և իշխան ընդունելոյ և թողլոյ և գործելոյ զամենայն որպէս և կամիցի։ Զայս հրաման առեալ Նորա բազում գընդիւք պահակերաց[2] և քարտուղարաց[3] մեկնեցաւ և գնաց յաշխարհն կապադովկացւոց ուր և ծնեալ էր, յԱրաբիսոս քաղաքի, և անդ ի գաւառէ անտի ժողովէր բազմութիւն երիտասարդաց և կարգէր ի զինուորութիւն տէրութեան Հոռոմոց. նոյնպէս ժողովէր զերիտասարդս և ի կողմանցն Հանձիթոյ, որ ի Հայս և յերկրէն Ասորոց։ Եւ հասեալ անդր, գնացեալ նախ հարզբանակ իւր առ Կթարիճ քաղաքաւ. և զահի հարան ի նմանէ ամենայն կողմանք Պարսից, վասն կանխահոչակ համբաւոյ Նորա։ Այլ մարզպանն որ պահէր զկողմն Պարսկահայոց, առ երկիւղի, կամելով ծածկել զփախուստ իւր յերեսաց Մօրկայ՝ ազգ արար կեղծեօք աւագանւոյն Թէոդոսուպոլսոյ։ Աւուրս, ասէ, երեսուն կազմեսցուք և պատրաստեսցուք, և ապա մարտ ղիցուք և տեսցուք թէ ո՞ յաղթէ կամ ո՞ յաղթի։ Իսկ Նոքա ծանուցին զբանն առ կոմսն Մաւրիկիոս. և տայր նա հրաման ասել ցմարզպանն. Մեք այժմէն իսկ պատրաստ եմք ի մարտ։ Եւ մինչդեռ Հոռոմք վստահացեալ կային, ի գիշերի անդ փախստեայ գնայր Մարզպանն հանդերձ զօրօք իւրովք, և ի գնալն ըստ սահման երկրի իւրեանց՝ մտին ի սահմանս Հոռոմոց, առ Նփրկերտիւ, և սկսան ապականել զերկիրն հրով և սրով և յափշտակութեամբ, զբովանդակ սահմանս Ծոփոյ և Ամդացւոց. և եկեալ հասին մինչեւ յԱմիդ քաղաք, զոր նստեալ պաշարէին զաւուրս երիս։ Եւ իբրեւ տեսին, թէ ոչ կարեն ի բուռն առնուլ զքաղաքն, խնդրէին արծաթ ի քաղաքացւոց անտի զի անվնաս թողցեն զքաղաքն, և մի՛ մատնեսցեն յապականութիւն զշրջակայս Նորա։ Բայց ոչ ոք հաւատայր Նոցա, գիտելով զի զսահմանս քաղաքին դատելոց էին ի հուր, եթէ ընդունէին արծաթ և եթէ ոչ։ Յայնժամ բարկացեալ Նոցա այրէին զամենայն եկեղեցիս և զվանորայս զմեծ և զփոքր և զայլ ամենայն որ ինչ արտաքոյ քաղաքին, և շրջեալ ընդ ամենայն տեղիս ուր ոչ գոյր Նոցա երկիւղ, ասպատակաւ հինից զաւուրս հնգետասան այրելով և յափշտակելով, և ապա յերեսաց ահին Հոռոմոց փախուցեալ երթային յաշխարհն իւրեանց։ Զայս ամենայն լուեալ Կոմսն Մաւրիկ ի սրտմտութիւն բարկութեան բրդեալ առեալ զզօրս իւր չոգաւ յԱսորիս զկնի Նոցա, այլ ոչ կարաց հասանել։ Յայնժամ զօրք Հոռոմոց առ զայրուցս բարկութեան զանանաբար դիմեալ անկան ի վերայ գաւառին Արզինն, յաճիւն և յաւեր դատէին զայն, սատակեալ և յափշտակեալ և առեալ զամենայն ի կողմանց անտի, գնային յաշխարհ իւրեանց, որպէս պատմեալ է մեր զայս ի պատմութեանս յառաջագոյն։ Իսկ զգերին ամենայն վարեալս ի կողմանց անտի յաշխարհն Հոռոմոց, հրամանաւ կայսեր տարեալ ի Կիպրոս կղզի բաժանեցին ի քաղաքս և ի գիւղս, ուր և բնակին Նոքա մինչեւ ցայսօր։

1. Comes excubitorum.
2. Excubitor.
3. Skribon.

digitised by A.R.A.R.@

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻԸ.

Յաղագս պատերազմաց որ յաշխարհին Հայոց և այլոց իրաց որք անդէն գործեցան։

Եւ մինչդեռ բազմութիւն զօրացն Հոռոմոց էին ի կողմանս Պարսկահայոց ընդ ձեռամբ երկուց զօրավարացն Յովհաննու և Կիւրոսի, անդ ժողովէր և Պարսիկն զզօրս իւր ընդդէմ նոցա և զի, որպէս ի վեր անդր ասացաւ, անմիաբան լեալ բաժանէին զօրք Հոռոմոց, և մի մասն իբրեւ յիսուն հազար այր, ասէին ի մի բերան, մի բարկութեամբ զրգռեալ. Ոչ ոք ի մէնջ երթիցէ ի պատերազմ. ոչ կամիմք մարտնչել և ոչ ընդ թշնամւոյ ումեք, չեւ ընկալեալ զռոճիկս մեր բովանդակ. և եթէ ոչ տացի մեզ ամենայն լիովին ըստ իւրաքանչիւր կարգի և աստիճանի ընդ սահմանեալ սակին։ Զայս գիտացեալ Տիբերեայ կայսեր՝ անդէն վաղվաղակի անյապաղ առաքէր զկայսերական հոգաբարձուն[1] անդր զՈրմիզդ Դոմենտիոլ, գանձ բազում տուեալ ի ձեռս նորա, զի բաժանեսցէ զօրականին, խաղաղացուսցէ, հաշտեցուսցէ և կազմեսցէ զնոսա ի պատերազմ։ Յայնմ ժամանակի Մարզպանն Պարսից առաքեաց պատգամ առ զօրավարս Հոռոմոց. Է՞ր աղագաւ՝ ասէ, իբրեւ զկանայս հանդէպ միմեանց նստեալ հայիմք ընդ երեսս։ Ե՛կ յայտնի ճակատ յարդարեսցուք և մարտիցուք։ Զայս լուեալ Կիւրոսի զօրավարի Հոռոմոց, գոլով այր ուղիղ՝ զի էր նորա վարժեալ առ մեծ զօրավարին Ներսեսի և ընդ նմա ի բազում պատերազմունս յաշխարհին Հոռոմոց արութիւն քաջութեան ցուցեալ, ետ ասել առ Մարզպանն. Մեք դեռ ոչ կարեմք մարտնչել, զի տակաւին ամենայն զօրք մեր չեն աստ առ մեզ. բայց եթէ դուք յառնիցէք ի վերայ մեր, յայնժամ և մեք պատերազմեսցուք որչափ և զօրս ձեռնհաս լիցիմք հաւաքել ըստ կամաց Աստուծոյ։ Զայս լուեալ մոգեանն՝ անդր ժամանէին, աներկիւղ վստահութեամբ յանձնապաստա՛ն լեալ։ Այլ ի նմին աւուր Կիւրոս պատրաստէր զաղտ լռելեայն զզօրս իւր միայն իբրեւ արս քսան հազար. խաղայր ի վերայ թշնամեացն գիշերայն մինչեւ ի մերձենալ առաւօտուն. իսկ զօրն Պարսից յանհոգս հանգուցեալ ննջէին խաղաղութեամբ։ Յայնժամ նա իբրեւ զհուր որ հրդեհէ զանտառ և որպէս զբոց հրաբուղխ լերանց, անկանէր ի վրայ նոցա և վեր ի վայր շփոթեալ հարկանէր ի սպառ, մինչեւ սակաւուց ումանց ճողոպրել կամելով ի փախուստ աճապարէին, կալեալ և զնոսա ունէին ի կապանս։ Կալաւ նա և Մարզպան մի և զորդի նորա, և աւարեալ զբանակ նոցա դառնայր մեծաւ յաղթութեամբ, տանելով ընդ իւր զզէնս և զերիվարս թշնամւոյն։

1. Curator usurae.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԴ.

Յաղագս բազում պատերազմաց, և վերջին պատերազմին կոմսին Մօրկայ, և առման Արզինի։

Յայսվայր կարճ ի կարճոյ որ ինչ յառաջին պատերազմունս պատահեցան՝ մի ըստ միոջէ նշանակեցաք, որպէս մարթացաք ըստ կարի քննութեամբ տեղեկանալ զճշմարտութենէ նոցա։ Ճառեցաք զպատերազմաց քաջի Պատրկին Մարկիանոսի առ Մծբին քաղաքաւ, և զիրացն անդէն կատարելոց և յետ այնորիկ, պատմեցաք զանցս Խոսրովու զօրու ծանու ի սահմանս Հոռոմոց և զառումն Դարայի, և ապա զԱպամեայ. և յետոյ զարշաւանս բազմայաղթն Մօրկայ յարեւելս փառօք մեծաւ, և զարհաւրացն անկելոց ի վերայ գնդին Մոգուց, և թէ ո՛րպէս խորհեցան Պարսիկք ծածկաբար խաբել զնա և գնացեալ ի կողմանց Նփրկերտոյ անցին ի սահմանս Հոռոմոց, և շտապ տագնապաւ աճապարեալ այրէին աւերէին և անցանէին ի կողմանս Ծոփաց և եկեալ յԱմիդ և տեսեալ զի ոչ կարեն առնուլ զքաղաքն, ըստ օրինի բարբարոսաց հրոյ ճարակ ետուն զամենայն շրջակայս նորա, այրեցին զեկեղեցիս և զվանորայս, այլովք հանդերձ և

առեալ զգերին ճեպով գնացին յաշխարհ իւրեանց։ Պատմեցաք և զայն թէ ո՛րպէս կոմսն Մաւրիկ զայս լուեալ սրտմտէր և մտանէր զհետ նոցա. այլ ոչ ժամանէր. ապա դառնայր շտապաւ ի կողմանս Արզնին, այրէր և աւերէր և առնոյր գերի զամենայն բնակիչս Արծինն, չտայր սպանանել զնոսա, այլ առեալ տանէր յաշխարհն Հոռոմոց. և ամենեքեան առաքեալ լինէին ի Կիպրոս կղզի։ Առնոյր նա անդ զամրոցսն, ընդ որս զանուանեալն Փում և կարգէր ի նմա պահապանս յազգէն Հոռոմոց։ Յարձակեալ և ի վերայ այլում ամրոցի՝ որ կոչէր Քղիմար, զոր պաշտպանէին Պարսիկք, առեալ ի նոցանէ արծաթ ի տուգանս ի բաց երթայր։ Ապա եկեալ ժողովեալ խօսէին ի խաղաղութիւն ընդ միմեանս, և տային և առնուին ի միմեանց աներկիւղ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԵ.

Յաղագս միւսոյ բերդին զոր Մօրիկ նա շինել հանեալ սահմանացն Ծոփաց և անուանեաց զնա Սամոկերտ (Samokerth)։

Ըստ նմին օրինակի փութայր Մաւրիկ շինել ի վրայ բարձու և ընդարձակ լերին Սամոկերտի բերդ մի որ նովին անուամբ Սամոկերտ կոչեցաւ։ Դնէր ի նմա Հոռոմ, կարգէր նոցա պարէնս և ամենայն պէտս բերդին հոգայր խնամով։ Այս Սամոկերտ է ի սահմանս Հոռոմոց. թողոյր նա զշինութիւն նորա ի ձեռս ճարտարապետաց և կատարէր զայն ծախիւք աշխարհին Պարսից։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԶ.

Յաղագս միւսոյ եւս բերդի որ կոչի Ակբաս (Akbas) *առ ափն կալատայ յերկրին Պարսից։*

Յանկոյս գետոյն կալատայ (Kalat), որ է ի ծագ սահմանացն Նփրկերտոյ, գտանի լեառն մի սեպացեալ, դժուարելանելի, յորում ի բազում ժամանակաց հետէ ապականագործ ազգն մոգուց խորհէր շինել ամրոց. այլ զի լեառնն մղոնաւ բացագոյն կայր ի մէջ սահմանացն Հոռոմոց և Պարսից, վասն որոյ ոչ կարէին շինել ոչ սոքա և ոչ նոքա. զի Հոռոմք հակառակեալ ոչ տային թոյլ. և շինեցաւ իսկ յաճախ և կործանեցաւ։ Այլ դէպ եղեւ երբեմն Պարսից գտանել պարապ ժամանակի և շինել և կարգել ի նմա պահապանս։ Իսկ յետ ամսոց ինչ խումբ մի զօրաց Հոռոմոց եկ անդր և պաշարեաց զայն և անուն զօրավարին էր Աւլոս։ Հրաման տայր նա պատել պաշարել զնա ընդ ժամանակս ձիգս մինչեւ որ ի ներքս անդ էին ստիպեալք ի սովոյ և ի ծարաւոյ, և մերձեցեալ ի մահ, տեսեալ զտառապանս իւրեանց, խնդրէին առնուլ երդումն ի Հոռոմոց, զի մի սպանցեն զնոսա և մի վարեսցեն գերի կամ առաքեսցեն յաշխարհն Հոռոմոց, զոր եթէ խոստանայցեն Հոռոմք՝ յայնժամ տուեալ զամրոցն և ինքեանք ելեալ ի բաց երթիցեն։ Արարին այնպէս զօրավարքն. խոստացան զոր նոքա խնդրէին և նոցա բացեալ զամրոցն ելեալ գնացին։ Եւ իբրեւ ելեալ երթային և գտեալ զջուր ըմպէին, և անդէն անկեալ յերկիր մեռանէին ամենեքեան, և սակաւք միայն ապրեալք լինէին։ Ապա զօրավարն հանդերձ զօրականօք ելանէին կործանէին զամրոցն և ոչ թողուին ի նմա քար ի վերայ քարի, զոր ոչ ցիր և ցան հոսեցին վերուստ ի ստորոտ լերինն։ Եւ այլ եւս զօրավարք բազմութեամբ զօրաց ժողովէին անդր, և յայլ և այլ տեղիս բաժանեալ նստէին և զգուշանային ընդդէմ միմեանց։

digitised by A.R.A.R.@